

**ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիր**

Արցախի ներդրումային հիմնադրամը փոքր ու միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) աջակցության պետական ծրագրի շրջանակներում իրականացնում է ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիր:

Ծրագրի նպատակն է նպաստել ԼՂՀ-ում ՓՄՁ սուբյեկտների ֆինանսավորման հետ կապված հիմնախնդիրների հաղթահարմանը և ապահովել ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը:

Ծրագրի շահառուները «ՓՄՁ պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ՓՄՁ սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն են, որոնք ըստ ոլորտների ներկայացված են աղյուսակում.

Ոլորտ	ՓՄՁ սուբյեկտների դասակարգում		
	Գերփոքր (աշխատողների առավելագույն թվաքանակը/ մարդ/)	Փոքր (աշխատողների առավելագույն թվա- քանակը/ մարդ/)	Միջին (աշխատողների առավելագույն թվա- քանակը/ մարդ/)
Արդյունաբերություն և նյութական արտադրության այլ ճյուղեր	5	50	100
Շինարարություն և էներգետիկա	5	25	50
Գիտություն և կրթություն	5	25	50
Տրանսպորտ, առևտուր և ծառայություն	5	15	30

**Աջակցությունից չեն կարող օգտվել** վարկային, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունները, գրավատները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղատների և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտները, ինչպես նաև դուստր և կախյալ տնտեսական ընկերությունները:

**Սուբսիդավորման գործընթացի մասնակիցները**

Սուբսիդավորման գործընթացի կազմակերպումն ու վերահսկողությունն իրականացնում են.

- Արցախի ներդրումային հիմնադրամը, որը անհատույց վճարում է (սուբսիդավորում է) ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի նկատմամբ հաշվարկված տոկոսների մի մասը և գործընթացի վերահսկողության նպատակով անց է կացնում ուսումնասիրություններ, դիտարկումներ, ստանում հաշվետվություններ, տեղեկանքներ և այլ տեղեկություններ.

- Հիմնադրամի հետ համագործակցության պայմանագիր կնքած առևտրային բանկերը (այսուհետ՝ Գործակալ), որոնք վարկերը տրամադրում են իրենց սեփական միջոցներով և ռիսկով:

### Գործակալ բանկերի կողմից տրամադրվող վարկի պայմանները

	Չափանիշ	Պայման
1.	Վարկի արժույթը	ՀՀ դրամ/արտարժույթ
2.	Վարկի առավելագույն տոկոսադրույքը	տարեկան մինչև 18 %
3.	Վարկի առավելագույն տևողությունը	մինչև 60 ամիս
4.	Վարկառուներ	ԼՂՀ ՓՄՁ սուբյեկտներ հանդիսացողներ
5.	Այլ պայմաններ	մեկ վարկառուին կարող է տրվել միայն մեկ վարկ

Վարկի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորման /այսուհետ՝ Սուբսիդավորում/ ենթակա չափը սահմանվում է Գործակալ բանկի կողմից սեփական միջոցների հաշվին վճարվող 8 տոկոսային կետի տարբերության հաշվարկմամբ, որը հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ:

Սուբսիդավորումը իրականացվում է հիմնադրամի միջոցների հաշվին՝ անհատույց վճարումների միջոցով:

### Ընթացակարգը

#### Քայլ 1

#### Հայտի ընդունումը

Շահառուները հիմնադրամի գրասենյակում Սուբսիդավորում ստանալու համար լրացնում են հայտ: Հայտում նշվում է՝ ՓՄՁ սուբյեկտի անվանումը, գործունեության տեսակը, իրավաբանական հասցեն, գործունեության վայրը, վարկի նպատակը, վարկի գումարը, վարկի մարման ժամկետը, ծրագրի շրջանակներում ստեղծվելիք աշխատատեղերի քանակը:

Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

- գործարար-ծրագիր՝ հիմնադրամի կողմից սահմանված պահանջներին համապատասխան,
- պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրության պատճենը, տնօրենի նշանակման մասին հրամանի պատճենը, տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձնագրի պատճենը,
- գործունեության վայրի վկայականի սեփականության կամ վարձակալության վկայականի պատճենը,
- գրավ դրվող գույքի վկայականի պատճենը,
- հարկ վճարողի հաշվառման համարի քարտի պատճենը,
- լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համար՝ լիցենզիայի պատճենը,

- շինարարական աշխատանքների իրականացման դեպքում նախագիծ և նախահաշիվ՝ հաստատված մասնագիտացված կազմակերպության կողմից:

## **Քայլ 2**

### **Հիմնադրամի ֆինանսական կոմիտեի որոշումը**

Հիմնադրամի ֆինանսական կոմիտեն ընդունված հայտը քննարկում և կայացնում է որոշում՝ տվյալ գործարար ծրագրի մասով ստացվելիք վարկի տոկոսադրույքի մասնակի Սուբսիդավորմանը համաձայնություն տալու կամ մերժելու մասին:

## **Քայլ 3**

### **Երաշխավորագրի տրամադրումը**

Համաձայնություն ստացած շահառուին տրվում է գրավոր երաշխավորագիր՝ ստացվելիք առևտրային վարկի տարեկան տոկոսադրույքի մասնակի Սուբսիդավորման պատրաստականության և պայմանների մասին: Երաշխավորագիրը ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և ուժը կորցրած է համարվում 60 օրացուցային օրվա ընթացքում վարկային պայմանագրի չկնքման դեպքում:

## **Քայլ 4**

### **Պայմանագրի կնքումը**

Հիմնադրամի երաշխավորագիրը և Գործակալի կողմից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից Գործակալը 15 /տասնհինգ/ բանկային օրվա ընթացքում կատարում է շահառուի վարկունակության վերլուծություն և կայացնում համապատասխան որոշում՝ վարկ տրամադրելու կամ վարկի տրամադրումը մերժելու մասին: Գործակալը կարող է հրաժարվել ՓՄՁ սուբյեկտին վարկ տրամադրելուց նաև վերջինիս՝ Գործակալի ներքին կարգերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու դեպքում:

Վարկառուի և Գործակալի միջև կնքվում է վարկային պայմանագիր: Անհրաժեշտության դեպքում՝ հիմնադրամի, Գործակալի և վարկառուի միջև կարող է կնքվել Սուբսիդավորման պայմանագիր (երկկողմ կամ եռակողմ):

## **Քայլ 5**

### **Մոնիթորինգը**

Սույն ծրագրի շրջանակում հիմնադրամը և Գործակալը իրականացնում են տրամադրված վարկի նպատակային օգտագործման մոնիթորինգ: Մոնիթորինգը յուրաքանչյուր շահառուի մոտ իրականացվում է ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

### **Սուբսիդավորման վաղաժամկետ դադարեցման հիմքերը**

Սուբսիդավորումը վաղաժամկետ կարող է դադարեցվել հետևյալ հիմքերով՝

- վարկառուի դիմումի համաձայն,

- վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման դեպքում,
- վարկառուի հետ կնքված վարկային պայմանագրի լուծման դեպքում,
- Գործակալի կողմից վարկի «ոչ ստանդարտ» դասակարգելու պահից: «Ոչ ստանդարտ» դասակարգված վարկը «ստանդարտ» կամ «հսկվող» դասակարգվելու դեպքում Սուբսիդավորումը չի վերականգնվում, բացառությամբ, եթե հիմնադրամի ֆինանսական կոմիտեն՝ վարկի սուբսիդավորումը դադարեցնելուց հետո Վարկառուի առնվազն 3 ամսվա գործունեության մոնիթորինգի արդյունքների հիման վրա ընդունում է Սուբսիդավորումը վերականգնելու մասին որոշում: Սուբսիդավորումը կարող է վերականգնվել միայն մեկ անգամ: